վանահօր շնորհիւն է: Վանքը կը լինի գլխաւոր ամրոցը. նրա դիրքը եւ ամրութիւնը յարմարութիւն ունեն այդ կոչմանը: Ինքը վանահայրը կառաջնորդէ իր վիճակի հաղբակեցիներին: Հասբիստանու կռւում նա արդէն ցոյց տոեց, թէ ինքը ընդունակ է այս գործին»:

Հասբիստան կոչւում էր Բարդուղիմէոս առաքելոյ վանքի մօտ մի դաշտ, ուր քանի տարի առաջ պատահեց մի արիւնահեղ կռիւ հայերի եւ քրդերի մէջ արօտամարգերի սահմանների պատճառով: Քրդերի մի նոր ցեղ, որ գաղթել էր այստեղ Մար-գաւառի կողմերից, չէր թողնում հայերին արածացնել իրանց հօտերը: Հասբիստանում, որ սկզբանէ հայերի սեփականութիւն էր: Վէճը վճռոեցաւ սրով, եւ յաղթութիւնը մնաց հայերի կողմը:

Մի քանի տողերից յետոյ Կարօն շարունակում էր.

«Վանահօր հետ — դարձեալ Բարդուղիմէոս առաքելո-մեր խորհրդակցութիւնից երեւցաւ, որ հակառակ կողմի ուժը աւելի զօրաւոր է, քան թէ մենք կարծում էինք: Երկու եղբայրներ՝ Օմար եւ Օսման աղաները, որոնցից իւրաքանչիւրը Ջալալիների ցեղի գլխաւորութիւնը յափշտակելու պատճառով թշնամացել էին, կրկին հաշտոել են: Ջալալիների բաժանուած կուսակցութիւնները միացել են: Շիկակների Մահմոլղ աղան, իր աղջիկը հարսնութեան տալով Ռաւանդների Ղադիր աղայի որդուն, երկու ցեղերի մէջ բարեկամական յարաբերութիւնները նորից սկսոել են: Միւս կողմից, Մուքրիների եւ Մամըքանների մէջ հին թշնամութիւնը նորոգոել է: Ռաշիդ աղայի կինը, երկար սպասելով, թէ իր սպանուած ամուսնի եղբայրները չկամէին առնել նրա արեան վրէժը, քանի օր առաջ ծպտեալ հագուստով հանդիպում է իր տղամարդի սպանողին, եւ ինքը կինը վրէժխնդիր է լինում: Դու գիտես, որ այդ երկու ոսոխները յիշեալ երկու ցեղերի գլխաւորներն ենէ:

Ես զարմանում էի, թէ Կարօն ինչո՞ւ է ուրախանում քրդերի զանազան ցեղերի միմեանց հետ թշնամական յարաբերութիւններ ունենալու մասին, եւ կամ ինչո՞ւ է տխրում, երբ նրանք հաշտւում են: Բայց վերջին դէպքի մանրամասնութիւններն իմացայ ես յետոյ: Ռաշիդ աղան Մամըքանների ցեղապետի որդին էր: Նրա իսկական անունն էր Կրպոյ. կոչոեցաւ Ռաշիդ (քաջ) իր զարմանալի քաջագործութիւնների համար: Նա սպանոեցաւ Մուքրիների ցեղապետի որդու նենգութեամբ: Ռաշիդի կինը ուխտել էր չոէր առնել իր երեսից սգաւորի սեւ քօղը. մինչեւ իր ամուսնի գերեզմանը չհանգստացնէ: Դա նշանակում է քրդի լեզւում՝ մինչեւ սպանուածի արեան վրէժը չառնոի: Այս նպատակով նա սնուցանում էր իր տասներկու տարեկան որդուն, որ առնէ հօր վրէժը եւ կատարէ մօր ուխտը: Որդին մեռնում է կարճատեւ հիւանդութիւնից յետոյ: Մայրը մի քանի օր անհետանում էր իր չադրից: Նրան